ընկել. — Ընչուիմ (բուսնիմ). — Թնչկալ (ուկ. Թղկալ տղու, Բնչկի). — Թռչ (ծովու ժժմակ, խեցեմորթ մը). — Խառնարուր. — Խառնոց (կարթ, խառն կամ խայծ զնեղու գործիք). — Խիչ (մասն, կտոր). — Զըչան. — Զնչել և Զուչն-ք. — Խոր. Զուչ. — Խնչոր. — Կուչն (չ-լի-չ). — Զառնախարիթ (խառն). — Զառնեմ. — Զառնիր. — Զուչ (քուրջ). — Եռնչանեմ (քաղաք, Թերեւս առն բասէն). — Կապանեմ. — Կառնչ կամ սիւն. — Կիւն (հարապ). — Կնչի կամ սնչի. — Կնչի (հարա-չ). — Վիմաձօն.

Բացառութիւն են՝ քանց, որ է քանդարմատ քանդել բայի, և անց, որմէ՛ զանց. — առ-անց. — ց-անց. — առ-անցք (հիւ). — առչանց-անք կամ առ-անց-անք և յանցանք. կայ նաեւ ած-անց և ցանց-առ (ուկ.).

ԳՍՈՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԱՆ

Ծ. Խ. — Մեր յարգելի աշխատակից Գառնիկ էֆ. Բարունակեանի «Հայ լեզու»-ին իբր քննադատական բան մը կարդացինք տեղական շաբաթաթերթի մը մէջ. Կը ցաւինք որ Պ. քննադատը շատ աճապարած է և յօդուածին փոքր մասին վրայ իր դիտողութիւնը բրած է՝ առանց սպասելու ամբողջութեանը. իսկ «Հայկական Ուղղագրութեան» մասին գրածներուն դէմ ալ ողորմելի քննադատութիւն մը կարդացինք և որուն պատասխանը ընդունած ենք մեր աշխատակցէն, սակայն հրատարակութիւնը տեղւոյ անձկութեան պատճառաւ յառաջիկայ թիւին կը թողունք.

Խորհուրդ մը Դ. Խ. ի մեր կողմէ. — Այսուհետեւ լաւ կ'ընէ եթէ յօդուածի մը վերջաւորութիւնը կարգայ, ու ապա քննադատի հովեր առնէ.

Մեր կողմէն ուրիշ ըսելիք մը չի մնար բայց եթէ Գառնիկ էֆ. ի պատասխանը հրատարակելէ ետքը փակել սոյն վիճաբանութիւնը, ընդունելով սակայն ամէն արդարացի դիտողութիւններ եթէ ըլլան.

ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵԻՔՆ



ԴԱՌՆԱՀՈԳԻՆ

Ոգելից ըմպելեաց գործածութեան դէմ քանի աշխարհս կայ հակառակ խօսեր են և կը խօսին միշտ. մինակ խօսիլ ըլլար, գործել ալ կայ. գինեհատական քանի քանի ընկերութիւններ կազմուած են շատ տեղեր. բժիշկներ արգիլած են և բեմերէ որչափ անգամներ անարգական նախատինքներ տեղացած են խաղողին ջուրին գլխուն.

Սակայն գինեմոլներն ալ իրենց պաշտպանողականը ունին. «Նոյ նահապետէն մեզի մնացած ժառանգութիւն մըն է. ինքն էր ամենէն առաջ խաղողէն գինի հանողը, խմողը և միանգամայն գինովցողը. գինին չինել, խմել և գինովեալ, իրմէ սորված ենք. եթէ ատոր մէջ մեզք մը կայ իր վիզը ըլլայ, մենէ ի՞նչ կ'ուզե՞ն» կ'ըսեն.

Երկու հակառակորդներ — գինեմոլներ և գինեհատներ — կը մրցին իրարու բոլորովին հակառակ ուղղութեամբ. թող մրցին ու գածնուն չափ, այդ մեր հոգը չէ, միայն սաչափ ըսենք որ՝ տարեկան հաշուեկշիռները անհամեմատ առաւելութիւններ կուտան Բագոսին.

Այս չէ իմ ըսելիքս.

Օր մը եթէ գործ չ'ունենաք, առ ի հետաքրքրութիւն Բագոսի տաճարները այցելեցէք. պիտի տեսնէք որ քարոզիչ եկեղեցականներուն, «Ինչո՞ւ Աստուծոյ խօսքը մտիկ ընելու չէք դար, սիրելի եղբայրներս և քոյրերս» ծամծմող ժողովական Երեցին, «մկրտուեցէք և պիտի փրկուիք» յստորտացող Մկրտչականին, «ապաշխարեցէք, զի աշխարհիս վախճանը մօտալուտ է» գուժատու և աշխարհք գալուն զղջացող Շաբաթականին, և «Սուրբ հոգին խնդրենք, որ Աստուծոյ մեզի շնորհք տայ», շնորհատու Քուէյքերին հոգեշունչ խօսքերը մտիկ ընելու երթալէ աւելի ժողովուրդը դիմած է այդ մեհեանները, և խորին անհաճութեամբ մը կրամբամբուլին առջեւ կ'երկրպագէ անկեղծ մաղթանքներ և գովեստներ շուայլելով անոր.

Վստահ եղէք որ ամենքն ալ շատ միտ-

Թարուած դուրս պիտի ելլեն. մինչդեռ եթէ կղերականներուն քարոզները մասիկ ընելու երթային՝ բոլորովին յուսաբեկ պիտի զատուէին սրբատեղիներէն:

Բագոս իրաւունք ունի և պիտի ունենայ. իրեն քուէ տուողները միշտ մեծամասնութիւն պիտի կազմեն. մէկուն մէկ վիշտը կ'ամօքէ, որ մէկին ցաւը բոլորովին կ'անհետացնէ, մէկալին զուարթութիւն կ'ուտայ, մտածող մը վայրկենապէս կ'անհոգացնէ. վերջապէս ինչ երկարեմ, ամենուն ալ խաթրը խօշ կ'ընէ:

Սակայն այս չէ իմ ըսելիքս:

Ձի կարծէք թէ Բագոսի խնկարկուններէն մին եմ. ընդհակառակը:

Եթէ չէք հաւտար, քանի մը օրինակով ապացուցանեմ ձեզ:

Կարծեմ քսան տարեկան. . . այո՛, կայի, մինչեւ այդ տարիքս ոգելից ըմպելիք ինչ է չէի գիտեր, համը չէի նայած բնաւ:

Օրին մէկը ընկերոջ մը հետ բարեկամի մը տունը գացինք. հակառակ մեր ակնկալութեան բարեկամին չի գտանք. ընկերս հոգը անգամ չ'ըրաւ, որովհետեւ բարեկամին տեղ սեղանին վրայ օղիին շիշը գտաւ:

Եւ բարեկամուս խաղ մը խաղալու համար, առաջարկեց որ օղին խմենք, հատցընենք և ձգենք երթանք:

Կ'ըլլայ մի՞, կ'ըլլայ: Սկսանք կնձել. մեր կողորդային ուղիները կարծես թէ իւզոտած էին, օղին սնդիկի պէս կը սահէր կ'երթար բոլորովին մատաղ և անընդունակ ստամոքսին:

Կէս ըրինք շիշը, գլուխնիս դարձաւ. ընկերս «Քեզի բան մը ըսե՛մ, մենք ամենը չպիտի կրնանք լմնցնել, բայց պակասածը պարտեկու համար ի՞նչ ընելու ենք» հարցուց:

«Ատկէ դիւրին ի՞նչ կայ. . . պակասածը ջրով կը լեցնենք կը պարտկուի կ'երթայ» ըսի անձնավստահ շեշտով մը, խորհելով թէ ջրով և օղին, երկուքն ալ անգոյն հեղուկներ, իրար խառնուելով բան մը չեն ըլլար:

Ջարսածի ընկերս գիտնալով հանդերձ թէ հետեւանք ինչ պիտի ըլլայ, «Պրափօ՛, շատ աղէկ խելք ըրիր» ըսելով խրախոյս տուաւ ինծի:

Պակասածը ջրով լրացուցի:

Անպատկառ քահնայ մըն է՝ փրցուց ընկերս. զարմանօք տեսայ որ շիշին պարունակութիւնը ձեպճերմակ կաթի փոխուել էր:

Քարուիւս հասկցայ, բայց ի՞նչ ընէի. ես ալ սկսեցի խնդալ, մանաւանդ որ խաբուելովս բան մըն ալ սորված եղայ. երանի թէ ամեն մարդ ինծի պէս խաբուէր:

Սակայն հոյակապ խախտութիւնը վերջն էր:

Աչքերնիս շտոր մտոր, սրունքնիս իրարու կը տաթթուին, թեւ թեւի տուած կ'երթանք. զուարթ անգիտակցութիւն մը մեր ուղեղները պաշարած է. դիմացնիս ելնող մարդիկը աչքերնուս մէջմէկ գաճաճներ կ'երեւան, կարծես պզտիկ լեռները ստեղծողները մենք ենք. անցորդներուն գիտողութիւնները ականջնիս անգամ չի լսեր. խնայ ելլելով խաղք ու խայտառակ վերջապէս տուն կը հասնինք:

Թէեւ շարունակութիւնը ամօթով պիտի ձգէ մեզ, բայց բան մըն է ըրինք, լման մը ըսեմ գոնէ. հետեւեալ օրը երբ խելքերնիս գլուխնիս եկաւ՝ առ ի վարձատրութիւն մեր մայրիկներէն մէջմէկ ալ փառաւոր ծեծ կ'երանք:

Այդ առաջին անգամ արեւնալս էր. անկէ ետքը պիտի մըն եկաւ վրաս, և երկար տարիներ կաթիլ մը ալքով բերանս չ'առի:

Ուրիշ օրինակ մը. բարեկամիս մէկը ինծի անկեղծօրէն յանձնարարեց որ՝ կերակուրէն առաջ քանի մը գաւաթ օղի խմելը և վրայէն գինի խմելը շատ օգտակար է, մանաւանդ ինծի պէս կազմ ունեցողներուն համար:

Ես ալ բարի սովորութիւն մը ունիմ որ՝ բարեկամի կողմէ անկեղծօրէն յանձնարարութիւն մը եղածին պէս անմիջապէս կ'ընեմ: Տունս որ բնաւ օղի և գինի չէր մտած, մտաւ:

Օրեր, շաբաթներ անցան. օրին մէկն ալ միտքս ինկաւ, «Մայրի՛կ, օղին բեր» ըսի. նայեցանք որ ալքովը ցնդեր՝ անհամ բան մըն է եղեր. «Գինին բեր», գինին ալ քացախի փոխուել էր. ալ կրնաք հասկնալ ինչ աստիճանի ալքովամոլ ըլլալս:

Այս ալ չէ իմ ըսելիքս:

Շատեր խմած ըլլալու համար, գինովեւելու համար կը խմեն, և կը խմեն բոլորովին աննպատակ մարդկութեան սահմանէն դուրս

եկալու աստիճան, այս կարգի խմաններուն շատ հակառակ եմ:

Կը խոստովանիմ ալքոլին սոսկալի վնասակարութիւնը, մարդկութեան հասուցած չարիքները, սակայն ոմանց համար խմելին ներելի կը սեպեմ:

Իւր ամենօրեայ հոգերովը բեռնաւորեալ աղքատը, վիշտերէ և նեղութիւններէ գլուխ չի վերցնող թշուառը, յուսահատ զրկեալը, սիրոյ մէջ խարուած սիրահարը, և սիրտը մեռած դառնահոգին, երբեմն երբեմն իրենց ջերմոտ հոգիները սակաւ ինչ զովացնելու, և իրենց կտրի զգայնութիւնը պահ մի թըմբեցնելու համար՝ երբ գինեւորները դիմեն, մի կարծէք թէ ատոնք գինեմոլներուն դատակարգեն են:

Իմաստուն մը՝ որու համար ըսուած է թէ ոչ իրեն պէս եկած է՝ և ոչ ալ գալիք ունի, տեսէք հազարաւոր տարիներ տաաջ ինչ ըսած է այդպիսիներուն համար:

Օղին կորսուելու վրայ ելողին, և գինին դառնահոգիին տուէք, որպէս զի խմելով իրենց ազգատութիւնը մոռնան և իրենց թըշուառութիւնը անգամ մըն ալ չը յիշեն»:

Եթէ չէք հաւատար ըսածիս, բացէ՛ք Սողոմոն իմաստունի Առակայ գրքին ամենէն վերջի գլուխը, և կարդացէ՛ք 6—7 համարները: Եւ եթէ մեծ ձանձրութիւն չ'ըլլար ձեզի՝ նախ 4—5 համարները կարդացէք, ուր պիտի տեսնէք թէ որոնց համար արգիլուած է:

Պատրաստ եմ իմ աջակցութիւնս նուիրել ամեն անոնց՝ որոնք գինեմոլութիւնը նուազեցնել կը ճգնին, սակայն չպիտի թողում որ դառնահոգիներուն դպչին. որովհետեւ դառնահոգին գինեմոլ մը չի կրնար ըլլալ, իւր հոգիին դառնութիւնները ալքոլով մեղմել ուզելուն՝ մի կարծէք թէ ուրիշներու պէս գիտակցութիւնը բոլորովին կը կորսնցնէ:

Դառնահոգին մինակ իւր անձնական վիշտերովը չի բաւականանար. եղբօրը, ընկերին, բարեկամին և իւր համայնից ցաւերը, հոգերը, վիշտերը, կսկիծները և դառնութիւնները իրն ալ են:

Կը սիրեմ դառնահոգիները, շատ հաճոյքով մտիկ կ'ընեմ իրենց քաջածները, և կենաց մէջ ունեցած դառնահոգիի՝ ելեւէջները, որովհետեւ ատոնք իմն ալ են:

Թոյլէ՛ք, բան մը մի՛ ըսէք, դառնահոգին

ուզած ատենը թող խմէ, քանզի պէտք ունի անոր, պէտք ունի մոռացումի, պէտք ունի վաղանցուկ զուարթութեան մը. և արդէն քա՞նի ժամ պիտի տեւէ այդպէս, չէ՞ մի որ հետեւեալ օրը նոյնն է արդէն:

Եւ մի մեղադրէք զիս՝ երբ խմած տեսնէք, վստահ եղէք որ այդ օրը վիշտ մըն ալ ես ունիմ:

Ահա այս էր իմ ըսելիքս:

Հսկիքս ըսի թէ եւ, սակայն անոնք որ մինչեւ հիմա իրենք զիրենք չ'ին կրնար արդարացնել, վախճամ թէ ասկէց վերջը ըսեն «Ի՛նչ ընեմ, դառնահոգի մըն եմ, պէտք ունիմ խմելու»:

ՔԱՐՈՂ

ՁՄԵՌՈՒԿԻ ՈՐԴԵՐԸ

Պատասխան Հանրագիտակի 15 թիւ հարցումին

Ռօտոսթոյի մի քանի երկրագործներ կը հարցնեն թէ, ձմերուկը որդերէ ազատ պահելու միջոցը ո՞րն է:

Ահա՛ հարցում մը՝ որուն պատասխանը ոչ միայն Ռօտոսթոյի երկրագործներու օգտակար կրնայ ըլլալ, այլ նաեւ բոլոր անոնց որոնք ձմերուկի մշակութիւնով կ'զբաղին, քանի որ ամեն տեղ ձմերուկը քիչ շատ ենթակայ է տեսակ տեսակ հիւանդութիւններու կամ կարգ մը որդեր կը փճացնեն ձմերուկին բերքերը, խօսինք անոնց վրայ:

Անցեալ տարի (1897) երկու տեսակ որդեր մեծ վնաս հասցուցած են Ռօտոսթոյի ձմերուկի դաշտերուն մէջ, դեռ Եւրոպա գտնուելովս չ'կրցի այդ դաշտին որդերը տեսնել:

Ձմերուկին աճման վնասող ամենէն աղետալի որդը փոքրիկ ակար մ'է (acarion)՝ որուն գիտական անունն է acarus cucumeris. այս փոքրիկ որդերը տերեւին վարի երեսին վրայ տանդէլի նման բարակ թելերէ հիւսկէն մը կը կազմեն, և եթէ խոշորացոյցով մը դիտենք, պիտի տեսնենք այս որդերէն հազարներ, որք կը շրջին բարակ թելերուն ուղղութեամբ (այս պատճառաւ է անշուշտ որ մեր երկրագործները կ'էզինդի կը կոչեն):

Այս որդերը ծծիչներու միջոցաւ բոյսէն աննդարար հիւթը կը ծծեն՝ որուն իբր հետեանք տերեւները կը կծկին, կը չորնան ու կ'իյնան, և բոյսն ալ իւր ամենէն կարեւոր գործարանէն (տերեւ) զրկուելով կը վնասուի, ձմերուկը չ'աճիր:

Այս որդերը ջնջելու համար ունենք կը յորդորեն ծխախոտի ջուրով (jus de tabac) տերեւները ջրել: Բայց կը թուի որ այս միջոցը լաւ արդիւնք մը յառաջ չ'ընէր: Եւելի լաւ է փոշիացած ծծումբ ցանել տերեւներուն վրայ, գլխաւորաբար՝ տերեւին յատակի երեսին վրայ:

* * *

Ձմերուկին վնասող երկրորդ որդ մ'ալ կը գտնուի. փոքրիկ սեւ լուրճ մ'է (մեր Ռոտտֆոցներուն կազպէնտը puceron) որ նոր ծիւրը կ'ուտէ և կ'արգիլէ բոյսին կանոնաւոր աճումը: Ասոր առաջը առնելու համար բաւական է գրեխով (շիրիկակ) մը ծխախոտի ջուրը սրսկել բոյսին վրայ:

* * *

Մի քանի երկրագործներու հետ խօսած ժամանակս ինձ պատմեցին թէ՛ անցեալ տարի երբ ձմերուկը 2-3 տերեւներ ունէր, արտին վրայ բազմաթիւ կարմիր թիթեռնիկներ կը թռչտէին. ասոնց մեծութիւնը գրեթէ մէկ սանթիմետր էր, քիչ յետոյ կը տեսնուէին կարմրագոյն (բէնպէ) որդեր տերեւներուն վարի երեսին վրայ, որոնք — հուանական է — կարմիր թիթեռնիկներու (papillon de luzerne) հաւկիթներէն յառաջ եկած են. ասոնք ջնջելու համար իբր գործնական միջոց պէտք զանաք ժողովել և ճշգրտել ոտքին տակ:

* * *

Ձմերուկը ենթակայ է նաեւ գաղութացումին հիւանդութիւններու (maladie cryptogamique), (կարծես գաղութացումներն ալ միմայն հիւանդութիւններ յառաջ բերելու համար ստեղծուած ըլլան):

Սպիտակը (blanc) (այս է հիւանդութեան անունը) յառաջ կուգայ փոքր սունկէ մը որ չաքարի փոշիի նման կը ծածկէ ձմերուկը այլեւայլ կէտերու վրայ: Այս սունկին աճումը դադարեցնելու համար բաւական է փոշիացած ծծումբ ցանել բոլոր բոյսին վրայ:

* * *

Վերջապէս իբր երկրորդ անկային հիւանդութիւն, կայ չարկեղը (chanere) որ յառաջ կուգայ երբ օդը շատ խոնավ և տաք ըլլայ: Ինչպէս անցեալ տարի որ շատ անձրեւոտ և խիստ ալ տաք կ'ընէր: Չարկեղը յառաջ բերող սունկը կը կրծէ բոյսին տերեւներու և պտուղներու հիւստեանները:

Իբր միակ դարման պէտք է պնդուի մը հանել այն մասը որ այս հիւանդութենէն (չարկեղ) վարակուած է: Չարկեղ կոչած հիւանդութիւնն իսկ մեր երկրագործներու թափաք պատրաստ կոչած հիւանդութիւնը ըլլալու է (*):

Ռոստրոյ

Մ. Կ. ՄԱՆԱԲԵԱՆ

(*) Մեր յարգոյ աշխատակից Ե. Կ. Մալաքեան էժ. Ի առաջարկած միջոցները շատ լաւ են, բայց կարելի է նաեւ հետեւեալ միջոցներն ալ գործածել, կեղիքի, սպիտակ, քարշը պատրաստ կամ պարսպաւոր իջուած հիւանդութեանց համար:

Աճուց արգանակ. — 8 լիթր ջուրի մէջ հալեցուցէ՛ք 200 կրամ մարած կիր (կիրը առաջուց կռելու է եւ յետոյ մարելու է. այսինքն՝ չի մարած 200 կրամ ըլլալու է). ուրիշ ամանի մը մէջ խառնեցէ՛ք իւր 1 լիթր ջուրի մէջ 300 կրամ քիմիկ, եւ լեցուցէ՛ք վերի կրաջուրի մէջ. այս գործողութենէն վերջը նոսրէ՛ն զայն ամանի մը մէջ հալեցուցէ՛ք 200 կրամ պղնձի ծծմբ (կոզքաշը) 1 լիթր ջուրի մէջ: Բաղադրութեան մէջ զտնուած 200 կրամ կիրին սեղ կ'ընա՛ք գործածել նաեւ 300 կրամ սոսա:

Պղնձի ծծմբաւ հալելէն վերջը, խառնեցէ՛ք վերի բաղադրութեան, եւ ձմերուկի տունկերուն վրայ սրսկեցէ՛ք մղեղակով մը եթէ ունիք. ապա թէ ոչ ցախաւելով մը. նայելու է որ մասնաւորապէս տերեւներուն սակի կողմը աղէկ մը քրչի այս արգանակով:

Այս գործողութիւնը կատարելու է մայիսի մէջ, հիւանդութիւնը չ'երեցած, եւ երկրորդ անգամ մ'ալ յունիսի վերջերը. վստահ եղի՛ք որ 100ին 90 աղէսքին առաջը առած կ'ըլլա՛ք:

Պոլսոյ երջականներ գրեթէ ամեն տարի ձմերուկի տունկերը պարսաւա՛ք կը վարակուին. (հաւանական է որ Ռոստրոյ եւ այլու ալ այնպէս ըլլայ) ուստի կրկին անգամ կը յանձնարարուի ձմերուկ մեակողներուն, որ վերոյիշեալ դեղերը հիւանդութիւնը երեւալէն առաջ դարմանը ընեն, հիւանդութենէն վերջը ամեն դարման նուազ ազդեցութիւն կ'ընեն եւ շատ անգամ ալ ապագային կը մնան:

Իսկ ձմերուկի լուրններուն եւ քրքուրներուն համար կ'ընա՛ք գործածել թէ ծխախոտի հիւրը օգտակարապէս եւ թէ՛ մեր ներկայացուցած միւս միջոցաւոր դեղերէն իմե՛ք:

Լիառնա են՛ք որ այս տարի Մ. Մալաքեան էժէնի, այդ հիւանդութեանց եւ վնասակար միջոցներու վրայ օգտակար ուսումնասիրութիւններ պիտի կատարէ, եւ արդիւնքը նաղորդէ Հանրապետականի. որով՝ թէ իր հայեցակցաց եւ թէ միանգամայն ամեն ձմերուկ մեակողներու օգտակար պիտի ըլլայ:

Զ. ԲՈՒՏ

ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՐՏԻՉՊԱՆՆԵՐՈՒՆ
ՀԱՄԱՐ

Միջատասպան դեղեր

1. Ծխախոտի ճիւղ. — Եւրոպայի մէջ
ռէժիի ձեռակերտարանները պատրաս-
տելով կը ծախեն: Կրնաք հետեւեալ
կերպով պատրաստել. առէք 50 կոամ
ծխախոտ, ըլլայ տերեւ, ջարդուած կամ
փոշի, և 1 լիթրա ջուր. եռացուցէք
լաւ մը՝ մինչեւ որ շաւիղէ թանձրու-
թեան հասնի. պաղելէն վերջը պարզու-
տէ անցուցէք (լաթէ մը սիւղմիշ ըրէք) և
պահեցէք շիշի մը մէջ: Գործածութեան
ժամանակ 1 լիթրա պարզ ջուրի մէջ
խառնեցէք այս հիւթէն 40էն 100 կոամի
հաշով և ձարձատեցէք տունկերուն
վրայ մշեղակով (pulvérisateur) — տեսակ
մը գործի է — ջուրը ուժով հրելով, մու-
խի պէս շատ բարակ կը ժայթքեցնէ.
սափրիչներու խանութը կը գտնուի այս
գործիքին փոքր տեսակը, որով գլխուն
և դէմքին վրայ պարզ ջուր կամ դէն-
քինաի եւայլն. շատ կը սրսկեն. փոքր
պարտէզներու համար ասոնցմէ կարելի է
գործածել:

Միտիուէ վարակուած այգիներու
դարմանման համար, այժմ Հանրային
Պարտուց վարչութիւնը բերել տուած է
այս մշեղակներուն մեծ տեսակները:

Ծխախոտի հիւթը եթէ ասանկ գոր-
ծիքի մը միջոցաւ ուժով չի ժայթքուի,
ազդեցութիւնը մեծ չ'ըլլար:

2. Առէք 50 կոամ ծխախոտ, 500
կոամ (կէս լիթրա) ջուրի մէջ մէկ քա-
նի վարկեան եռացուցէք, աւելցուցէք
վրան 5-10 կոամ նատրի բնածխատ
(ոտա). պաղեցուցէք և գործածեցէք
վերը յիշուած եղանակով:

3. Քարիւղի օշարակ. — Առէք 100
կոամ սովորական օճառ (շաւիղէի սպիտակ).
— 2 լիթրա քարիւղ — 1 լիթրա եռա-
ցած ջուր, և պատրաստեցէք հետեւեալ
կերպով:

Նախ ջուրը եռացուցէք, օճառը մէջը
հալեցուցէք, և վերջը լեցուցէք վրան
քարիւղը, 10 վարկեանի չափ աղէկ մը
խառնեցէք, մինչեւ որ խառնուի պէս ըլլայ.
այս գործողութենէն վերջը դրէք նորէն
կրակին վրայ խառնուրդը, եռացուցէք
անգամ մ' ալ միշտ խառնելով, որպէս
չի քարիւղը չի բռնկի. վա՛ր առէք և պա-
ղեցուցէք: Գործածութեան ժամանակ
այս խառնուրդին 1 լիթրային վրայ 10
լիթրաի չափ ջուր խառնելու է, և վերը
յիշուած մշեղակով կամ ցախաւելով
(շաւիղէի «խիւղէ») մը սրսկելու է տունկե-
րուն վրայ: Գործածուած ջուրը լեղի
ըլլալու չէ, որովհետեւ ոչ քարիւղը և ոչ
ալ օճառը չեն խառնուիր հետը:

4. Միջատասպան տիւֆուռի. — Ջուր
10 լիթրա. — արարիկ օճառ (պար-
պար, կակուղ դեղնադոյն օճառ մ'է, որ
պարպար կը նմանի) 300 կոամ. — Իգա-
փող 152 կոամ (դեղագործներու ծա-
խած և բիւէթա կոչուած մլուկները
ջարդող փոշի):

Ջուրը եռացուցէք, օճառը լաւ մը
հալեցուցէք մէջը, խառնեցէք իգափողը
պզտիկ եփ մը տուէք. պաղեցուցէք և
յետոյ գործածեցէք վերը յիշուած եղա-
նակներէն մէկով:

5. Առէք ջուր 10 լիթրա. — Արարիկ
օճառ 300 կոամ. — Բեւեկնի խակու-
թիւն (թիթէմէնթի բուհու կամ նէֆթ
եաղի, աղէկը ըլլալու է):

Ջուրը եռացուցէք, օճառը հալեցու-
ցէք մէջը, վար առէք քիչ մը պաղելէն
վերջը կամաց կամաց բեւեկնի խակու-
թիւնը մէջը լեցուցէք և շարունակ
խառնեցէք:

6. Ջուր 1 լիթրա. — Արարիկ օճառ
100 կոամ. — քարիւղ 50 կոամ:

Եռացուցէք ջուրը, օճառը հալեցու-
ցէք մէջը և յետոյ խառնեցէք քարիւղը:

7. Միւլֆօ-Քառպօնիաթ տը բօթասիօմ
10 կոամ. — Ջուր 1 լիթրա:

Խառնեցէք իրար պարզապէս և գոր-
ծածեցէք:

Այս վերջինը ամենէն ազգուն է:

Վերոյիշեալ միջատապան դեղերը կրնան գործածուիլ առ հասարակ բոլոր լուծ (աղած պիթի, ինչ որ մուկի, լուի կամ ոչիլի կը նմանի տունկերուն վրայ) որդ, թրթուր, զեռուն և իրենց նմանները ոչնչացնելու համար, բլլայ ծառերու, բանջարեղէններու կամ ծաղիկներու վրայ: Եթէ տունկը փափուկ է, պէտք է վրան աւելցած ջուրի քանակութիւնը շատցնել: Իսկ զօրաւոր տունկերու համար ալ քիչ ջուր դնելու է:

Մենք վերոյիշեալ բաղադրութիւններուն մէջ միջին չափ մը միայն դրինք:

Լ. ԲՈԼՍ

ՎԱՐԴԱԼՈՒԻՃՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԶՆՋԵԼՈՒ Է

Պատմական քիւ 13

Վարդի տունկերը աւրող, կրծող շատ տեսակ միջատներ կան, չենք գիտեր թէ ո՞րու համար է ձեր հարցումը: Բանի որ դուք անոր ձեւին կամ կազմին վրայ դոյզն գաղափար չէք տուած, ևս բացատրեմ անոնց մէջէն ամենէն աւելի վարդենիները վնասող տեսակը, դուք ալ ուշով կարդացէք և բաղդատեցէք ձեր պարտեզի վարդենիները սպառնալու տեսակին հետ, և ըստ այնմ վարուեցէք: Ամենէն աւելի վարդի տունկերը վնասող կանաչ վարդալուծն է (pucceron vert) 3 հազ. մեթր (միլիմեթր) երկայնութիւն ունի, քիչ մը հաւկթածեւ է մարմինը, գոյնը բաց կանաչ կըլլայ ամառը, իսկ մոյգ (խոյի) կանաչ ձմեռը: գլուխը սեւ, հազիւ թէ տեսանելի երկու փոքր աչքերով կնճիթ մը ունի՝ որ աւելի ծծիչ մ'է: Երկու սեւ երկայն բողկուկներ (միջատներու գլխուն վրայ եղջիւրի նմանող երկայն և բարակ մազեր), որ միջատը կեցած ատեն կռնակին վրայ կը ծռէ: փորին երկու կողմը գտնուած մասնաւոր գեղձերէ տեսակ մը խէժ կ'արտահոսէ: 4 թեւեր ունի, որոնց երկուքը շատ փոքր իսկ միւս երկուքը մարմինէն ալ աւելի երկայն: Այս լուծը հաւկթ չ'ածեր, այլ գար-

նան առաջին օրերուն, երբ առաջին տեսակը կ'արտադրէ: Կենդանի փոքր լուծներ են: Մենդարերութիւնը կը տեւէ 3-4 վարդենի, էգը կը բարձրացնէ որովայնը, աջ ու ձախ տատանելով շարժումներ կ'ընէ, և փոքրիկ լուծը տակաւ դուրս կ'ելլայ նախ յետնակողմը կ'երեւի, և երբ միայն գլուխը կը մնայ, իսկոյն որովայնը կը խոնարհեցնէ և բողբոջին վրայ կը զետեղէ գայն, որ ծնելուն պէս կը քալէ և կ'երթայ մօրը փորին տակ ապաստանիլ: Միեւնոյն բողբոջին (ֆիլիզ) վրայ 10նի չափ ձագ կը զետեղէ, և յետոյ թռելով կ'անցնի ուրիշ բողբոջի մը վրայ, և այսպէս շարունակաբար, մինչեւ որ իր ծննդաբերութեամբ սպառի և մեռնի: Նորածիւնները էգ կը ծնին, և երբէք արուի մերցաւորութեան պէտք չ'ունին, իրենց սաղմոյսին վիճակի մէջ արդէն բեղմնաւորած են, և ծնելէն 15 օր վերջ ծննդաբերութեան կ'սկսին, և կը շարունակեն մինչեւ իրենց վերջին շունչը: Ալ երազեցէք թէ որ աստիճան արագ օրէն կըբազմանան, և թէ դուրսութեամբ առաջըր առնելու համար, պէտք է գարնան առաջին օրերուն վարդի տունկերը քննել, և այն միջոցին որ տակաւին ծննդաբերութիւն չեն սկսած և սակաւթիւ են ոչնչացնել զանոնք: որովհետեւ՝ այդ միջոցին երբ մէկ լուծ սպաննէք, 20 000ի մօտ նորածին լուծներ ոչնչացուցած պիտի ըլլաք, որոնք հետզհետէ պիտի արտադրուին:

Կարգ մը միջատներ կան, որոնք այս լուծին շատ հակառակ են, և անոնցմէ մեծ քանակութեամբ կ'ոչնչացունեն:

Մրջիւնները այդ լուծներուն արտադրած խէժը այնչափ կը սիրեն որ, աշխուժութեամբ ամեն կողմ կը փնտռեն զանոնք, և երբ գտնան, կը յարձակին վրան և կը ծծեն մինչեւ որ միջատը սատկի: Երբ վարդի տունկին վրայ մրջիւն տեսնաք, վստահ եղիք որ հոն անպատճառ վարդալուծներ կան:

Բայց մրջիւններէն աւելի ահուելի թշնամի մ'ունի վարդալուծը: գրեթէ մանրագիտական փոքրիկ հետաքննող պիծակ (ichneumon) մը, որ վարդատունկերու բոլորտիքը թռչտի, և լուծներ կը փնտռէ, և երբ տեսնայ, ակնթարթի մը մէջ վրան կը նետուի, փորին վրայէն կը ծակէ և անոր մարմնոյն մէջ հաւկթ մը կը զետեղէ: Այսպէս ծակուած լու-

իճը կը բաժնուի իր ընկերներէն, և իր ծծի-
չով կը կառչի տերեւի մը կամ բողբոջի մը,
ուր կը մնայ անշարժ, գոյնը կը փոխուի կար-
միր: Երեսուն օրի չափ այդ վիճակին մէջ
կը մնայ, և այդ միջոցին փորը կը բացուի և
փոքրիկ հետահան պիծակ մը մէջէն դուրս
կը թռի: Միլիօններ կ'սպառեն այսպէս պի-
ծակները, բայց միլեառներով կը գտնուին
տակաւին ապրող, զորս ոչնչացնելու համար
չատ միջոցներ կը գործածեն, բայց դժբաղ-
դարար այն չափ շուտ կ'աճին չարահիւսները,
որ դժուարաւ առաջը կ'առնուի: Բացառ-
ելով ձեզ ատոնց մէկ քանի դիւրին և աղէկ
տեսակները: (Տես ներկայ թերթիւ 157 ե-
րեսը):

Ղ. ԲՈԼՍ

ՇԵՐԱՄԱՐՈՒԾՈՒԹԻՒՆԸ



ԲԱՍԹԵՕՌԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

(Շար. 8-ն քի. 9)

Երկրորդ շրջան. — Առաջին խորհրդացումը
լրանալուն պէս, թրթուրներուն վրայ ծակ-
ծրկուած թուղթ կը տարածեն, թեթեւ ճաշ
մը կ'ուտան, երկրորդ ժուռին քիչ մը առա-
տօրէն և կը փոխեն անկողինը: Խօսինք քիչ
մը այս անկողնոյ փոփոխման վրայ:

Անկողնոյ փոփոխումը անհրաժեշտ պէտք
մ'է, որ կը կայանայ որդերը իրենց աղբէն
զատել, որուն խոնաւութենէն և փտութե-
նէն յառաջ եկած մեաւորները (միազմադիւր,
մասնաւորապէս գաղջ տաքութեան մէջ
գտնուող կարգ մը գործարանաւոր նիւթե-
րու յամր փտութենէն առաջ եկած վնասա-
կար արտաբերումներ, որոնք իրենց մէջ կը
պարունակեն արենային խոնգարում պատ-
ճառող մանրէներով) անոնց առողջութիւնը
կը վթարեն:

Անկողնոյ փոփոխումը, որ շատ տեղեր տա-
կաւին կը կատարեն հնաւանդ դրութիւննե-
րով, խելացի շերամաբոյծ մը պէտք է ի
սպառ մերժէ: Այս հնաւանդ դրութիւնը կը
կայանայ հետեւեալ եղանակին մէջ: Թըր-
թուրները արթննալուն պէս, անոնց տե-
րեւներ կուտան, որոնց վրայ հաւաքուել-

նուն պէս, ձեռքով տերեւները կը վերցնեն,
որուն հետեւանքն է դժուարութիւններ,
և անհոգութենէ առաջ եկած կորուստներ:
Թրթուրները կը ճգմուին, կը վրաւորուին,
կը սատկին, հոս ու հոն կ'իյնան, և կ'սկսին
հոտիլ: Ուրկէ՝ յառաջ կուգան թէ մթնոլոր-
տի ապականութիւն և թէ բերքի զգալի նուա-
զում: Ուրիշներ կը գործածեն խիստ մանր
ծակերով ուղեկաններ վանդակներուն մեծու-
թեամբ, որ կը տարածեն թրթուրներուն
վրայ, երկու ժուռ ճաշ կուտան, և երբ բոլոր
թրթուրները ուղեկանին երեսը ելլան, երկու
հոգի ուրկանին ծայրերէն բռնելով ուրիշ
մաքուր վանդակի մը վրայ կը տանին: Բայց
տարած ատենին, որովհետեւ ուղեկանը կա-
կուղ և թուլ է, մէջտեղը կը գողաւորի և
բոլոր թրթուրները իրարու վրայ կը հաւաք-
ուին, մէկգմէկ կը ճնշեն, կը ճզմեն և կը վի-
րաւորեն:

Բայց էօժէն Ռօպէն անուն խելացի շերա-
մաբոյծ մը այս մասին խիստ գնահատելի
գիւտ մ'ըրած է, որուն շնորհիւ բոլոր այդ
դժուարութիւններուն առաջը առնուելով
հանդերձ, թրթուրներու տեղափոխումը չու-
տով կը կատարուի, և երբէք անոնցմէ վնաս-
ուող չի գտնուիր: Վերոյիշեալ շերամաբոյ-
ծին գիւտը ինչպէս վերը ըսինք, տեղափոխ-
ման ժամանակ, թրթուրներուն վրայ ծա-
կուկէն թուղթ տարածելու դրութիւնն է:
Եւ ինչպէս տեսանք վերը, որդերուն նոր ծը-
նած ատեն, զանոնք տերեւիկներով բուծա-
րաններուն վրայ բերուած ատեն, տակեր-
նին թուղթ պէտք է փռել, որպէս զի վան-
դակին ճեղքերէն վար չ'իյնան: Բայց այդ
թուղթերուն վրայ երկար ատեն մնալով, ի-
րենց կղկղանքը (աղբ) տերեւներու կտոր-
ուանքին հետ խառնուելով, նեխամէտ աղ-
բաղէշով մը կը վերածուի, որ պէտք է մաք-
րել, և հեռացնել որդերու ներկայութենէն,
որպէս զի՝ անոնց գարշահոտ արտաբերերը
որդերուն առողջութիւնը չի վթարեն: Ահա-
ւասիկ այս պատճառաւ երբ թրթուրներուն
ճաշը պիտի տրուի, նախ անոնց վրայ կը
տարածեն ՅՈ հ. մեթր լայն 45 հ. մեթր եր-
կայն թուղթեր, որուն ամբողջ մակերեսոյ-
թին վրայ մանր ծակեր բացուած են: Այս
թուղթերուն վրայ կը տարածեն տերեւի
ջարդուկը, և որդերն անմիջապէս ծակերէն

վեր սողողակելով տերեւներուն վրայ կը տա-
րածուին: Բայց որովհետեւ երբեմն կը պա-
տահի որ, որդերէն ոմանք փոխանակ թուղ-
թին երեսը ելլալու, միայն գլուխնին կ'ան-
ցընեն ծակերէն ներս և այնպէս կ'ուտեն,
անոր համար սպասելու է, և երկրորդ ճաշ
մը տրուելէն վերջ միայն կատարելու է ա-
նոնց տեղափոխումը: Բոլոր որդերը այն ա-
տեն թուղթերուն երեսը ելած են, բայց ե-
թէ անոնցմէ ոմանք իրենց նախկին անկող-
նոյ վրայ մնացած գտնուին, պէտք է զա-
նոնք նետել, որովհետեւ շատ կարելի է որ
անոնք հիւանդ ըլլան: Երբ այսպէս թուղթե-
րը որդերով կը ծածկուին ամբողջովին: այն
ատեն անոնց ծայրերէն բռնելով տեղաւորե-
լու է ու շաղթութեամբ քրթակուին (թխուառ)
մէջ:


Թղթակալը կազմուած է 30 հ. մեթր լայն
և 45 հ. մեթր երկայն տախտակէ մը, որուն
մէկ կողմը կտր մը կայ, և երեք կողմը 5 հ.
մեթր բարձրութեամբ տախտակներով եզեր-
ուած է, և կտրին դիմացի կողմը միայն ա-
ռանց եզերքի է, որպէս զի ծակոտէն թուղ-
թը անարգել սահելով իջնայ: Այս կերպով
ահա որդերը ծակոտէն թուղթերուն վրայ
առնելով, և թուղթերն ալ մէկիկ մէկիկ
թղթակալին վրայ դնելով կը տանին որոշ-
եալ բուժարանին վրայ զետեղելու, ու շաղ-
թութեամբ թղթակալներուն վրայէն սահեցը-
նելով, որ գործողութիւնը կը կատարուի
առանց ձեռք դաշնելու որդերուն: Եթէ ի-
րենց նախկին անկողինին վրայ մնացած որ-
դերէն ոմանք քաջառողջ երեւին, և որ թե-
րեւս անծանօթ պտտահաւ մը չեն կրցած
թուղթին վրայ ելլել, այն ատեն առէք զա-
նոնք, բայց զատ բուժարանի մը վրայ դրէք,
և երբեք միւսներուն մի խառնէք, որպէս զի
չըլլայ որ իրենց տեսքէն խաբուած ըլլալով,
տխտաժէտ որդեր միւսներուն խառնած ը-
լաք, և ամբողջ բերքը վտանգէք:

(Շարունակելի)

Հ. ԲՈՒՍ

ԾԱՆ. — Շերամի յօդուածինմէջ, մեր յարգե-
լի խմբագրապետին բացակայութեան պատ-
ճառով՝ սխալ մը սպրդած է, այն է թէ՛ թիւ
15 պատկերը այս թւոյն մէջ պիտի հրատա-
րակէինք, և որուն բացաարութիւնը այս
յօդուածին մէջ կը գտնուի: Իսկ թիւ 16

պատկերը (խոնաւաչափ) որ չէինք հրատա-
րակած ստորեւ կը զետեղենք:



Պատ. թիւ 16. — խոնաւաչափ

ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք
հետեւեալ նուէրները, որոնք եղած են
զանազան վարժարաններու համար:

1. Մալկարա բնակող ազգայիններէն
Տր. Սանտալճեան էֆէնտի՝ իբր նախ-
կին սան Խաս-Գիւղի ներսնեան վար-
ժարանին՝ կը նուիրէ 1 տարեկան Հա-
թիւ Առաջին թիւէն սկսեալ:

2. Դարձեալ Մալկարա ազգային-
ներէն Կարապետ էֆ. Վալթան կը
նուիրէ մէկ եռամսեայ, մեր յարմար
դատած վարժարանին, Տնօրինութիւնս
կը զրկէ Եալովայի Եալաք-Տերէի ազգ.
աղբատ վարժարանին:

ԱՐՏՈՒՏԱՏԵՐ ԱՐԻՔՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՄԼՈՒԿՆԵՐԻՆ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՔ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գուժ-Գարուի կողմերը, սկսած են իրենց անտանելի ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի դեղարանը, Լանկա Ալաճա-Մէսճիտ Թիւ 9, հոն պիտի գտնէք մլուկի փոշի Խաչ, և միանգամայն ամեն դրպանի դիւրամատչելի:

ԳՐՔԵՐՈՒ ՅԱՆԿ

Ֆէսճեան. — Հեղինակ Գէորգ Էֆ. Թորգոմեան. — Սոյն տաճկերէն հեղինակութեան մէջ կը խօսուի Քիլօքսերայի վնասներուն և դարմաններուն վրայ: Դին 100 փարայ:

Հենրի Պետրուս. — Լինհարտ և Գերարուդ. — Մանկավարժական վիպակ: Դին 5 զրուշ:

Դաւիթ Թրանսաղոյ — Մարգարանուծիւն. — Տ. Գ. Զարգարեան 1870. Թրգմ. Ս. Ղուկասեան էջ 139. — Սոյն գրքի մէջ կը խօսուի մարդկային տեսակին. ծագում մարդոյ և այլեւայլ շահեկան նեւթոյ վրայ, թէեւ մոռցուած գիրք մը կրնայ իր նորութիւնը ունենալ, Դին զեղչեալ 3 1/2:

Կիւս-Բէնէ. բարձր պարտի իշխ. — Հեղինակ իշխանուհի Ուսուսով 1894, էջ 147. — Մանկավարժական հարցերով զբաղողներու կարեւոր: Դին 5 զրուշ:

Վալը և Դաւարոս Ժամանակ. — Թրգմ. Օր. Ն. Յ. Իսաեան. — Խիստ բարոյական երկու վիպակներ կը պարունակէ: Դին 6 զրուշ:

Օնան-Բեդլ. — Հեղինակ Տր. Բլեման. Թրգմ. Ե. Մուրադեան. — Ոյր մէջ կը խօսի գիշութեան և այլ հիւանդութեանց վրայ: Դին 5 զրուշ:

Անանիան Խաչիկեան. — Երեք մասէ բաղկացեալ սոյն հատորիկը՝ որ կը պարունակէ 1. Ծնողք և իր զաւակունք, 2. Մա-

խու ապրանք, 3. Էրիկ կնիկ. — Շատ սիրուն կերպիւ նկարագրուած է մեր վարքն ու բարքը ամուսնական խնդիրներու մէջ: Դին 4 զրուշ:

Կը վաճառուի Զարգարեան Դրատունը: Գաւառները կը զրկուի նոյն գներով, առանց բօսթաի յաւելումի:



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ԱՆՅԱՆ-Կ. ՊԱՆԻՍ

ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱՆԻԵԱՆ

ձեւով պէյ խանի դրան կից, քիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Ձինական, Հնդկական, Ճաւայի և Սէյլանի էն աղնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱՆԻԵԱՆ Ստորագրութիւնը:

Հանրագիտակցութեամբ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս .
կը պարունակէ Դրական , Դիտական , Երկրագործական , Տնտեսական , Արհեստական եւայլն , եւայլն . շահեկան նիւթեր .
Երկրագործական , Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը արուին մասնագէտներու ձեռքով .
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրագիտակցութեամբ լրագրի

Կ. Պոլիս , Զարդարեան Գրաստան , Զագմահրար-Յօգուեստ քիւ 50

در علیہدہ چقماچیلرہ ۵۰ نومولی زارطاریان کتبخانہ سندہ (حاضر اقداد) مجموعہ علوم غریبہ سی ادارہ سندہ

Հանրագիտակցութեամբ պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ , ազդարարութիւններ , խիստ գիւրամատչելի պայմաններով . հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ , զոր պիտի ազդարարենք հասարակութեան , կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը .

ԳՈՐԾԱԿԱԼ Ք ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ . — Գարեգին էֆ . Պօղարեան	ԿԻՐԱՍՈՐ . — Արմենակ էֆ . Սօմունճեան .
ԱՏԱ-ԲԱԶԱՐ . — Ստեփան էֆ . Սափրիչեան	ԿԵՍԱՐԻԱ . — Գեր . Տրդատ Մ . Վ Պալեան .
ԱՐԱԲԿԻՐ . — Յ . Պ . էֆ . Մանուէլեան .	ՄԱՐԱՇ . — Արժ . Տ . Յովհաննէս քահանայ
ԱԹԷՆՔ . — Մկրտիչ էֆ . Մանուկեան .	Վարժապետեան .
ԳՈՒՐՏ-ՊԵԼԷՆ . — Արժ . Տ . Ստեփան քահանայ Մկրեան .	ՄԱՆՁԵՍԹՐ . — Յակոբ էֆ . Բողատեան .
ԳԱՀԻՐԷ . — Մ . Պաղտատար էֆ . Ս . Նաթանեան .	ՄԱՐՁՈՒԱՆ . — Յովհաննէս էֆ . Յակոբեան .
ԷՐՁՐՈՒՄ . — Եդ . էֆ . Տ . Ազարեան .	ՄԱՐՍԻԼԵԱ . — Նազարէթ էֆ . Զարդարեան .
ԹԵՀՐԱՆ . — Կարապետ էֆ . Բարարեան .	ՄՈՒՇ . — Գեղամ էֆ . Տ . Կարապետեան .
ԻԶՄԻՐ . — Կարապետ էֆ . Մալճանեան .	ՊԱՆՏԸՐՄԱ . — Արմենակ էֆ . Ս . Մսրեան .
ԻԶՄԻՏ . — Աբրահամ էֆ . Կտաւճեան .	ՊԱՐՏԻԶԱԿ . — Վահան էֆ . Ճիլունի .
ՄԱԼԿԱՐԱ . — Վ . Մանուկ էֆ . Զօլաքեան .	ՊՐՈՒՍԱ . — Օննիկ էֆ . Լուիֆեան .
ԽԱՐԲԵՐԴ . — Խոսրով էֆ . Քէշիշեան .	ՌՈՏՈՍԹՕ . — Յովհաննէս էֆ . Տէմիրեան .
ԿԵԼԻՊՈԼՈՒ . — Յովսէֆ էֆ . Տէր-Յովսէֆեան .	ՍԱՄՍՈՆ . — Կարապետ էֆ . Սէֆէրեան .
	ՍԸՎԱԶ . — Յ . էֆ . Գարակէօզեան .
	ՏՐԱՊԶՈՆ . — Սահակ էֆ . Էթմէքճեան .

ԳՐԱՏԱՆԻՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Դիրք գնել կ'ուզե՞մ , դիմեցե՞մ Զարդարեան Գրաստանը . հոն միշտ պիտի գտնե՞մ ամեն ուզածնիդ եւ միշտ գեղջով :

Հանրագիտակցութեամբ կը ծախուի ամեն լրագրովաճառաց քով , մասնաւորաբար

Լանկա , Խաչիկ էֆ . Ֆէսճեան Դեղարանը .
Սամաթիա , Կայարանը թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը .
Մագրի-Դիւղ , Պօղոս էֆ . Աղնաւորեանի խանութը .
Գատը-Դիւղ , Լեւոն էֆ . Զպուքճեան Գեղարանը .
Սկիւտար փիշթօֆճեան էֆ . ի խանութը .
Բերա , Մեծ փողոց Գառնիկէֆ . Կիւլէրեանի խանութը .